# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/63 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/63-2 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի սեպտեմբերի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի սեպտեմբերի 27-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է հատկացված ֆինանսական միջոցների շրջանակում աշխատանքների կատարման ծավալաթերթ նախահաշիվը և վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված Համաձայնագիր 2-ի համապատասխանաբար Հավելվածներ N 1-ի, N 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2022 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/63-2 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**